ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1094-Ա « 20 » հուլիսի 2026թ.

«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-26/68» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կողմից ներկայացված Դավթաշեն վարչական շրջանում ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների գնման հայտը.

1. Ձևավորել «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-26/68» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Մ. Դալլաքյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի նախագահ/
Ա. Կարախանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի առաջատար մասնագետ
Ա. Նիգոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի առաջին կարգի մասնագետ
Ա. Համբարձումյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի առաջատար մասնագետ
Շ. Հարությունյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի գլխավոր մասնագետ

2. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ծառայությունների գնումների բաժնի առաջատար մասնագետ Ա. Ամիրխանյանին:

3. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը

ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ. 1, հ. 126 սենյակ):

4.Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6.Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ